ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2015 թվականի N 168-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2015թվականի դեկտեմբերի 9-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին>> N 1077-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունվարի 18-ի <<ՀՀ Սյունիքի մարզպետարանի հաստիքացուցակը և աշխատակիցների 2013թվականի պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 3-Ա որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1).<<Քարտուղարության ընդհանուր բաժին>>-ը լրացնել նոր՝ <<գլխավոր մասնագետ>> տողով.

2).<<Քարտուղարության ընդհանուր բաժին>>-ից հանել 3-րդ տողը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ.դեկտեմբերի 11
ք. Կապան